

ՀԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Պատմական իրողութիւնները ճշգրտւում են պատմիչների և փաստաթղթերի վկայութեան վրայ. ինչ հարցում կան ակա- նատես վկաներ և փաստաթղթեր, այնտեղ այլ ևս վեճ չէ լի- նում և իրողութիւնը ակնյայտնի պարզութիւն է ստանում. Դժբախտաբար Հայոց պատմութեան մէջ գրեթէ բոլոր այն դէպքերն, որոնք այսպէս թէ այնպէս շարկապուած են եկեղե- ցական հարցերի հետ, այնքան խճճուել են Հռովմէական բա- րոյութեան հին մունետիկների և մանաւանդ պապական ան- սխալականութեան նոր արբանեակների աշխատանքներով, որ նոր պատմիչներին ու պատմութեան նոր ուսումնասիրողներին անմերժելի և անժխտելի պարտք է մնում մի առ մի քննել այդ ամենը, ստուգել ու ճշգրել Այսպիսի հետազոտութիւնների նու- րողները թող երբէք չկարծեն թէ կկարողանան լուսոյ շողեր արձակել պատմութիւնը խճճող ու խեղաթիւրող անձանց հո- դեոր խաւարի մէջ. բնաւ և ոչ Դուք գրեցէք ինչ ճշմարտու- թիւն որ կամենում էք, պարզեցէք քողարորդուած ստութիւն- ները, պատառեցէք եղուիթական դիմալիներ—այդ բոլորը ոչ մի փոփոխութիւն չեն մտցնիլ այն գրական կեանքում, որտեղ ծնունդ են առել այդ ստութիւնները, Դուք միայն զո՞հ պէտք է մնաք, որ ճշմարտութիւնը լուսաբանել էք պատմութեամբ. զբաղողների առաջ, Զորօր. Ս. Յովհան Իմաստասէրը գումա-

սեցի ազգայինների մէջ, որի հետեանքն էլ եղել է մտերմական թղթակցու- թիւն և մոլորների փոխանակութիւն երկու ծայրերում ապրող հայերի մէջ:

Այս նամակը կարող է ծուռայել իբրեւ ամենալու նմուշ այդ տեսակ- թղթակցութիւնների, փոխանակուած ինքնով երկու իւրեանց ժամանակուայ ինտելլիգենտ անձանց մէջ—մի կողմից յայտնի Աղաթօնի, միւս կողմից էլ 12 թուին Ռուսաց զօրքում ծառայած աւագ սպայի որդի Սարգիս Մարտիրոսեա- նի, որ սկզբից առևտրական գործերով է զբաղուելիս եղել, յետոյ կառա- վարչի պաշտօն է վերել յայտնի խալիբեանի մօտ:

Նամակումս հաղորդուած տեղեկութիւններից արժանի է ուշագրու- թեան մանաւանդ ժողովրդասէր Յակոբոս պատրիարքի (1839—62) մահուան հանգամանքը, որ այսպս է մեր եկեղեցական պատմութեամբ հետաքրքրուող- ներից շատերին:

Ե. Տառապիզ:

1900 Յունուարի 31

Նոր-Նախիջևան

րեց 726 թուին Մանազկերտի մեծ ժողովը, սեպտեմբերի 2-ին, Ասորոց միաբանութեամբ. նորա այդ ժողովը ուրացաւ Կղեմէս Գալանոսի աշակերտ Չամչեանը, հարիւր ընդարձակ երեսներ նուիրելով այդ ակնյայտնի իրողութեան հերքման. Մինչդեռ նոյն Հայրապետը ինքն է աւանդում իւր ժողովի պատմութիւնը, մեկ է թողել իւր բանախօսութիւնը, բոլոր մեր պատմիչները հաստատում են այդ, ժողովի առաջնակարգ եպիսկոպոս Գրիգոր Արշարունին նոյնն է վկայում, Ասորոց պատմիչներն էս՝ Արուլֆարաճ ու Միքայէլ Ասորին այդ են հաստատում, սակայն այսօր էս նոյն Չամչեանի անսխալականութեան երկըրպազունները դարձեալ նորա ասածներն են կրկնում և մինչև անգամ հ. Ջարբանալեանի «Հայկական դպրութեան պատմութեան» մէջ էս այդ որոտընդոստ սխալը կգտնէք՝ թէ այդ ժողովը Յովհան անունով մի անյայտ վարդապետ է զուարեւ և ոչ Իմաստասէրը:

Պատմական մի նշանաւոր դէպք էլ Շիրակաւանի ժողովն է. Հ. Մ. Չամչեանը գրում է իւր պատմութեան Բ. հատորում (էջ. 681—688. 1008—1010), որ Փոտ պատրիարքը ներում էր իւր երկրի Հայոց ու հալածում դաւանական առիթով. Ջաքարիա կաթողիկոսը թուղթ գրեց նորան, հերքեց նորա բամբասանքները, խնդրեց տեղեկութիւն տալ հակառակ դաւանանքի մասին և յայտնեց որ Հայերը ուրիշ եկեղեցիների վարդապետութեան համաձայն են. Սորան պատասխանեց Փոտը երկու թղթերով՝ մէկն առ Ջաքարիա և միւսն առ Աշոտ մեծ իշխանը, որոնք և ուղարկեց Յովհան կամ Վահան՝ Նիկիոյ արքեպիսկոպոսի միջոցով. Հայերը Շիրակաւանում 862-ին մի ժողով գումարեցին, զարմացան՝ որ անտեղեակ են եղել Յունաց ճշմարտութեան, քննեցին, խօսեցան, մի ճառ ասաց Յովհանը, 15 նշովքներ դրաւ ի դիմաց ժողովոյն՝ և ցրուեցան. նանա սարկաւազն էլ այնտեղ էր, որ և համաձայնութիւն կայացրեց Ասորոց հետ. Իսկ յետոյ Սահակ Մոռտը մի հակառակ թուղթ գրեց իբրեւ Աշոտի կողմից առ Փոտ. Չամչեանը յետոյ էս ծանօթութեան մէջ պնդում է, որ այդ ժողովը անշուշտ ընդունել է Յովհանի նշովքները, բանի որ ոչ ոք չէ ասում թէ չէ ընդունել. եթէ չընդունեին ասող չկայ, ուրեմն ընդունել են:

Չամչեանի պատմութիւնից անկախ չեն մնացել և մեր ե-

կեղեցական պատմութիւն գրողները Ամեն Մուրատեան եպիսկոպոսն ասում է, որ Յովհանն Հեռանում է ժողովից՝ «կարծելով՝ թէ արդէն Հայք միաբանեցան ընդ Յունաց» (էջ. 324)։ Գրեթէ նոյնը կրկնում է և արժ. Յուսիկ վարդապետը իւր եկեղեցական պատմութեան մէջ (էջ. 151)։

Արդ՝ պատմութեան աղբիւրներն են Ստեփաննոս Ասողիկ, Վարդան ու Կիրակոս վարդապետների յիշատակութիւններն և ժողովի պատմական մանրամասնութիւնները, որոնցից օգտուել է և Չամչեանը։ Վարդանը համառօտապէս պատմում է իրողութիւնը, բաղելով ժողովի յուշագրութիւնից և ամփոփելով Փոտի թուղթը, ըստ որում և վերջացնում է իւր խօսքն՝ ասելով որ Սահակ վարդապետը պատասխան գրեց։ Կիրակոսը յիշատակելով միայն այն թղթագրութիւնը, նկատում է՝ որ Աշոտի հրամանով պատասխանը գրեց Իսահակ վարդապետը «դեղեցիկ և իմաստասիրական», կամ ինչպէս Ասողիկն է գրում՝ «լի իմաստութեամբ և գիտութեամբ»։ Վարդանն ու Կիրակոսի հակիրճ նկատողութիւնները զիւր չեն եկել դոցա պատմութեանց Վենետիկեան հրատարակչին (եթէ չեմ սխալւում՝ հ. Ալեշանն է այդ), որ և՛ ըստ Զարբանալեանի՝ հմուտ ծանօթութեանց մէջ յորդորում է ընթերցողին կարգաւ Չամչեանը և տրամադրում է չհետեւել ամոաց հեղինակին՝ կամ «Կիրակոսի ախորժակաց»։

Մենք ունինք այժմ այդ թղթերը մեր առաջ և վկայութիւնները, որոնք և յառաջագրենք մի առ մի։ Մինչդեռ Բուդայ անօրէն դադանը աւերելով Հայոց երկիրը և զերելով բարեպաշտ ժողովուրդը, ամայացնում էր ամեն կողմ, Յոյներն էլ նախանձելով Բագրատունեաց զօրանալուն, սկսան լրացնել այդ չարիքը, հայհոյելով յունարնակ Հայոց դաւանանքը, խլելով վանքերը և հալածելով նոցա հաւատարիմ հովիւներին։ Սոքա էլ տեսնելով իւրեանց անկայուն ու երերուն վիճակը, փախչում էին ապաստանում զօրացող Աշոտի հովանու տակ, ինչպէս և արաւ յայտնի Սահակ Մոռտ կամ Ապիկուրէշ վարդապետը, գալով Աշոտի մօտ և պատմելով իւրեանց տառապանքները։ Այս ամենը չէր կարող անուշադիր մնալ. Զաքարիա կաթողիկոսը քաջալերութեամբ Աշոտ իշխանաց իշխանի յաղորդութեամբ ուրիշ ելք չգտաւ ու մի թուղթ գրեց առ Փոտ պատրիարքը (858—891), որով հաստատեց Հայոց դաւանանքի ճշմարտու-

Թիւնը, հերքեց Յունաց բամբասանք ու զրպարտութիւնները և ցոյց տուաւ՝ որ բրիտոնէական չէ դաւանական հալածանքը, Փոտն առիթ առնելով այս թուղթը, մի ընդարձակ պատասխան դրեց և Յովհանն Եպիսկոպոսի հետ ուղարկեց Հայոց մօտ, Փոտը այս թղթով մասամբ դովասանում է Ջաքարիային, մասամբ Հայոց եկեղեցին ու իւր հաւատքը, իսկ ապա մի խառնակ հայեացք է ձգում այն պատմական դէպքերի վրայ, որոնք անցել են Ե. դարից մինչև այդ ժամանակները և որոնք իբր թէ պէտք է Հայոց համոզեն միաբանութիւն կայացնելու թղթի վերջը դովասանք է Յունաց բարձրութեան և դաւանական ջատագովութիւն է, որի նպատակն է հրապուրել Հայոց:

Փոտը մի թուղթ ևս ուղարկեց առ Աշոտ. այս թղթով էլ դովասանում է նա Աշոտին, ձեակերպում է Հայոց դաւանանքները և յարձակում նոցա վրայ, յորդորում է ընդունել չորրորդ ժողովը, յայտնում է՝ որ ինքը փոյթ ունի ճշմարտութիւնը բարոյել Հայոց և մանաւանդ ինքը միջնորդ հանդիսանալով Աշոտի ու կայսեր մէջ՝ կամենում է սէր հաստատել:

Յովհանն եկաւ Շիրակական 862 թուին, որտեղ էր այդ ժամանակ Աշոտ իշխանը իւր զօրքով ինչպէս ասուած է ժողովի յիշատակագրութեան մէջ, և յանձնեց թղթերն ըստ հասցէին: Այդ ժամանակ Ջաքարիա կաթողիկոսը ժողով գումարեց «Եպիսկոպոսաց բազմաց և կրօնաւորաց առաջի Աշոտոյ Հայոց սպարապետին»։ «անդ էր և նանան ասորի սարկաւագ մեծ և հռչակեալ փիլիսոփոս»։ որոնք անշուշտ մասամբ Յունաց հալածանքներից փախած և մասամբ գերութիւնից դարձածներն էին: Յովհանն կոչուող այդ ազգուրաց Վահանն, որ «իմաստուն» և «պերճաբան» է կոչուած թղթերի վերնագրի ու յուշագրութեան մէջ, առաջարկեց իւր դաւանանքը մի ճառով, որում աշխատում է Հայոց եկեղեցու վարդապետութեան հաւատարիմ խօսել և ոչ Փոտի թղթին համաձայն, Իւր ճառն էլ նա ամփոփում է 15 նշովքների մէջ, որոնցում դարձեալ նոյն վարդապետութիւնն է արտայայտում և խոյս է տալիս երկուութեան դաւանանքից: Միմիայն ԺՄ. ու ԺԵ. նշովքներն այնպէս են ձեակերպուած, որ չի կարելի հաստատապէս ասել թէ արդեօք Հայոց չընդունած ժողովներին համակիր է ցոյց տալիս Յովհաննը՝ թէ ոչ Այդ նշովքներից մէկն ուղղակի մերժում է այդ ժողովները, իսկ միւսը՝ ընդհակառակն կարծես թէ ընդունում է:

Որ Յովհանն աշխատում է Հայոց եկեղեցուն համաձայն երևալ, նկատում ենք նորա մի թղթից՝ գրուած իբրև պատասխան Զաքարիայի հարցման՝ թէ ինչու ծննդեան տօնը մեզնից տարբեր են սահմանել: Եովհանն ձեռնկերպում է Զաքարիայի հարցումը իւր թղթում այսպէս. «Թէ ինչու ծննդեան և մկրտութեան տօնն, որ Յակովբայ Տեառնեղբօր առաքելական և նախագիր կտակը դնում է յունուարի վեցին, (Յոյներն ու Հռովմայեցոց պետութեան) բոլոր տիեզերքը միաձայնութեամբ հետևելով միմեանց՝ փոխադրել են՝ ծնունդը դեկտ. 25-ին և մկրտութիւնը յունուարի 6-ին»: Պատասխանելով այս հարցին՝ Եովհանն ասում է, որ այդպէս են արել միասին տօնելու դժուարութեան պատճառով և կամենալով առաւել փառաւոր անել Քրիստոսի տօները: Այլ և աւելացնում է՝ որ այդ մասին գրել են նաև Ս. Սահակին, բայց վերջինս պատասխան չէ տուել իբր թէ հեռացած լինելով ամոռակալութիւնից:

Եովհանն այս թղթում ևս խօսում է բնութեան խնդրի վրայ և խոյս է տալիս Հայոց հակառակ դաւանանքն ասելուց և մինչև անգամ ձգտում է իւր ուղղադաւանութիւնը ակնյայտնի դարձնել Հայոց առաջ: Սոյն թուղթն ևս դտնւում է նախընթացների հետ ու թարգմանուած է Ստում 1203 թուին Գրիգորի ու Բաղլի ձեռքով (Մատեն. Ս. Էջմիածնի. № 529. 530):

Ինչ եղաւ ժողովի հետևանքը: Հատ պարզ է: Թէ Ասողիկը, թէ Վարդանը և թէ Կիրակոսը յայտնապէս ասում են՝ որ «գեղեցիկ և իմաստասիրական» պատասխան տրուեց Սահակ Մոռա կամ Ապիկուրէշ մականունուած վարդապետի ձեռքով և Աշոտի հրամանով գրուած: Ինչ էր այդ պատասխանը՝ մենք իսկոյն կոեսենք, սակայն մենք ունինք և մի նշանաւոր վկայութիւն ժողովի ժամանակից, որի հեղինակն է նաև սարկաւազապետի «Եովհաննու Աւետարանի մեկնութեան» թարգմանիչը:

Այս յառաջաբանի մէջ թարգմանիչը խօսք առնելով առ իւր մեկենասները, յիշում է՝ որ նանան գրել է իւր մեկնութիւնը այն Բագարատ Բագրատունու խնդրանօք, որ նախանձախնդրութիւն ունէր Քլշտամբել և յանդիմանել զհերձուածողացն դասաւ: Երբ սա գերի տարուեց Հագարացոց ձեռքով, մեկնութեան գիրքն ընկաւ Սմբատ Խոստովանողի ձեռքը, որ նոյնպէս մեծ նախանձախնդրութեամբ պաշտպանում էր իւր

հաւատքն ու բարոյգում, Սմբատը պատուիրեց Թարգմանել այդ գիրքը հայերէնի և ապա ինքն ևս բանտարկուելով նահատակուեց, Այնուհետեւ այդ չարաբաստիկ մատեանն ընկաւ իշխանաց իշխան Աշոտի միջոցով իւր դուստր Մարիամ Բագրատունուն՝ Սիւնեաց տիկնոջ ձեռքն, որ և վերստին հրամայեց Թարգմանել:

Քաջաբան Թարգմանիչը, որի անունը դժբախտաբար յիշուած է, փոխադրեց այդ գիրքը հայերէնի 862 թուից յետոյ, Այդ պարզ է, բանի որ յառաջաբանում յիշուած է թէ Սմբատի նահատակութիւնը և թէ նորա որդի Աշոտ փշխանաց իշխանն, իսկ սա այդ տիտղոսն է ստացել 862 թուին (Հմմտ. Ասողիկ. էջ. 110. Թովմ. Արծրունի. էջ. 230): Հետեւաբար երկիրը խաղաղուելուց յետոյ է մեր Թարգմանիչը գրել իւր յառաջաբանը և հարկ համարել այդ խաղաղութեան մէջ յիշելու հաւատքի բաշ նահատակներին, ճշմարտասիրութեամբ ակնարկելով նաև Բագրատի թերևս երեսանց ուրացութիւնը:

Արդ՝ ահա՛ այդ յառաջաբանում Թարգմանիչ վարդապետը գրում է նանայի մասին. «Այր ոմն սարկաւադապետ գոլով, նանա անուանեալ, յոյժ հմուտ և վարժ ասորի դպրութեան, ստացող բոլորիցն առաքինութեան, պարկեշտ վարուք, մաքուր առ ամենայն մարմնական հեշտութիւնս, աղբիւրաբար ընկալեալ զշնորհս վարդապետութեան ի Հոգւոյն Սրբոյ ուղղափառ հաւատոյն որ ի Քրիստոս, որ և յանդիմանեալ զոմն եռետիկոս՝ զայր պերճաբան և իմաստասէր, վանեալ հալածական առնէր յաշխարհէս Հայաստանեայց, որ երբեմն խոտորնակս ուսուցանէր՝ յերկուս բաժանելով զՔրիստոսի անբաժ միաւորութիւնն, որ յետ անբակ և անշփոթ մարմնաւորութեանն, Եւ հաստատէ վերստին զնոյն ուղղափառ որ ի Քրիստոս դաւանութիւնն. մի յերկուց ընութեանց խոստովանել. զԱստուածականսն՝ ընութեամբ, իսկ զնուաստականսն՝ կամաւոր յանձնառութեամբ:

Աս գէպքի յիշատակութիւնն անում է և Վարդանը, միայն թէ նոնտիկոս բառը միանգամ ճշգիկուռա է կարդում և միւսանգամ «Ապիկուռայ», որպէս և Մ. Այրիվանեցին ճշգիկուռա եպիսկոպոս է անուանում: Վարդանի պատմութեան հրատարակիչն ևս նկատել է, որ նա յիշեալ յառաջաբանինն է կրկնում, միայն թէ ինքն էլ այդ յառաջաբանում «Ապիկուռ» է կարդում. սակայն հ. Գ. վ. Զ.-ը իւր «Մատենադարան հայկ.

Թարգմանութեանց» գրքում՝ էջ. 629 յառաջ է բերում այդ-
յառաջաբանը, դուրս ձգելով իւր դաւանանքին հակառակ տո-
ղերը, և նոյնպէս եռետիկոս է կարդում:

Ակնյայտնի է արդէն թէ ինչ ելբ է ունեցել Փոտի ա-
ռաջարկութիւնը և ինչպէս ամիրբերան լինելով հեռացել է Յով-
հան եպիսկոպոսը: Յաղթահարուելով հաւատքի ախոյեան և
Հազարացոց բանտերում տքնած ժողովականների առաջ, յոյս
կզնէր Աշոտ իշխանաց իշխանի վրայ, որ անշուշտ Բիւզանդիոյ
կայսրների բարեհաճութեան կարօտութիւն ունէր քաղաքական
դժուար կացութեան պատճառով: Ահա և Յովհանն ստացաւ
նորա այն թուղթը, որ յիշեցինք:

Այս թուղթը շատ վայելուչ արտայայտութիւններով ճոխ
է, բայց իմաստով ու փաստերով ապացուցութեամբ ու պատ-
ճառարանութեամբ հզօր, ըստ որում իրաւապէս կոչուած է
«գեղեցիկ և իմաստասիրական»: Աշոտը մի գեղեցիկ վերա-
ռութիւնից յետոյ յիշում է որ Փոտի թուղթը ստացել է ու-
րախութեամբ բարեբանել Փելէին, ուստի և շնորհակալութիւն
է յայտնում սերալիւր խօսքերի համար: Քաղաքավարական խօս-
քերով հաճելով իւր հակառակորդի միտքը, Աշոտն յառաջ է
բերում չորրորդ ժողովի հակառակութիւնը և նկատում, որ
Հայերը տեղեակ են բոլոր հանգամանքներին և զուր է Փոտը
այդ մասին գրում: Ապա նա հերքում է հակառակ դաւանան-
քը, մանաւանդ դէմ առ դէմ դնելով՝ նեստորի և Հովմայ բա-
հանայապետ Լեոն Ա-ի խօսքերն և դոցա նոյնութիւնը բա-
ցայայտելով, ըստ որում և նկատում է թէ ինչպէս կարող է
ընդունել Փոտի ստիպողական առաջարկը: Եւ որպէս զի իւր
խօսքը միւս կողմից ևս պարզ լինի, ցոյց է տալիս Յունաց նոր
դաւանանքի տարբերութիւնը Ս. Կիւրեղի վարդապետութիւնից,
որ Եփեսոսի ս. ժողովինն է: Այնուհետեւ մի առ մի յառաջ է
բերում Փոտի պարտութիւնները («օտարոտի խորհուրդ պրա-
բանութեան») իւր թղթից ու հերքում, որ Հայերը եւտիքեան
չեն, ջրում է և հակառակ վարդապետութիւնը բաւական վը-
կայութիւններով նկատում է՝ որ Հայերը Ս. Գրիգոր Լուսա-
ւորչից սկսած երբէք մոլորութեանց ու հերձուածների մէջ չեն
ընկել և պէտք չեն ունեցել ժողովների և ի վերջոյ յառաջ է
բերում իւր եկեղեցու ճշմարիտ վարդապետութիւնը:

Թղթի վերջում (որ հրատարակել է հ. Ալեշանը իւր Յու-

շիկում Ա, 457. ի հարկէ իւրեան նպաստաւոր միտումով կըր-
ճատած) Աշտը շնորհակալութեամբ յայտնում է՝ որ հետեւե-
լով Փոստի խորհրդին, միշտ պատրաստակամութեամբ կվերա-
բերուի առ Բիւզանդիոյ թագաւորութիւնը և սէր կպահէ նո-
րա հետ. ուստի և հայցելով նւիրական աղօթքը, բարեմաղ-
թութիւններ է անում ու թողութիւն աւարտում:

Այսպիսով ուրեմն Հիւրակաւանի ժողովը յետ մղեց Փոս-
տի պատրիարքի հնաւանդ միտումներէ նոր փորձերը, այլ և
Հայոց և Ասորոց եկեղեցիների դաւանական միութիւնը վերա-
հաստատեց *), Այս պնդան նշանաւոր էր, որ Զաքարիայի յա-
ջորդ ու կաթողիկոսարանում սնուած Գէորգ Բ. Գառնեցին
(875—897) թղթով առ Յովհաննէս պատրիարքն Ասորոց աշ-
խատում էր առաքելական ուղղութիւն մտցնել նոցա՝ մասամբ
տարօրինակ՝ եկեղեցական արարողութեան մէջ, որոնք անտես
էին առնուել նոյն Մանազկերտի մեծ ժողովում ներողամտա-
բար **):

Արեւիկ Տէր-Միքիլեան

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐ ¹⁾.

Խոհական ազգասէր եղբայր

Յովհաննէս Մկրտչեան Մայաթնեանց.

Գուցէ կը զարմանաք որ մի ձեզ անծանօթ մարդ համար-

*) Հմմտ. հմ «Հայաստ, Եկ. և Բիւղ. ժողովոց պարագայք» էջ. 143—
144, որի լրումն է այս:

**) Հմմտ. Միք. Ասորի. էջ. 339:

¹⁾ Ցանկալով դարուս հայ մեծ մարդկանց մէկի՝ Ստեփան-
նոս Նազարեանցի կենսագրութեան համար նիւթեր մատակա-
րարել, որին աշակերտելու պատիւն ունեցած ենք մէկ և կէս
տարի Ներսիսեան Գալրոցում, մենք Վումայի ի լոյս տեսնելու օ-
րից հրատարակեցինք նորա բազմաթիւ գրաբառ նամակները
40-ական և 50-ական թուականներին գրած: Այժմ նոյնքան սի-
րով հրատարակում ենք և նորա աշխարհաբառ նամակները,
որ սիրողաբար յանձնեց մեզ մեծ. պ. Ստ. Լիսիցեանցը, իսկ
ապագայում կտպենք խմբագրութեանս Բագուից ուղարկուած
նորա մի քանի շատ հետաքրքրական նամակներ հայ գործիչ-
ներին մասին:

Հրատ.